ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 դեկտեմբերի 2025թ. թիվ 882-Ա

Վ.ՃՈՒՂՈՒՐՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 37-րդ և 39-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023թ. դեկտեմբերի 14-ի թիվ 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 17-ի՝ ՀՀ Լոռու մարզի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի մասնագիտական հանձնաժողովի նիստի թիվ 503 արձանագրությունը և հաշվի առնելով Վ.Ճուղուրյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Վարդուհի Աղասիի Ճուղուրյանին 2026 թվականի հունվարի 5-ից նշանակել «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ալ.Մյասնիկյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ մեկ տարի փորձաշրջանով:

2. Վարդուհի Ճուղուրյանի փորձաշրջանի համակարգող նշանակել «ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Լուսինե Մատինյանին:

3. Վ.Ճուղուրյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

4. «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ալ.Մյասնիկյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Վարդուհի Ճուղուրյանին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ալ.Մյասնիկյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի գնահատմանը ներկայացնել ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրի 1 տարվա կատարողական հաշվետվությունը:

5. Փորձաշրջանի ղեկավար Լուսինե Մատինյանին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում գնահատել փորձաշրջանի ընթացքում տնօրենի կատարած աշխատանքները և մասնագիտական հանձնաժողովին ներկայացնել տնօրենի աշխատանքների գնահատման թերթիկը:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 30
ք.Վանաձոր